«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝** «Հարցադրումների մեթոդի կարևորությունը սովորողների ստեղծագործականության ձևավորման և զարգացման գործընթացում»

**Հետազոտող ուսուցիչ՝** Աքսանա Հարությունի Այվազյան

ՀՀ Արմավիրի մարզի « Նորապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

**Մենթոր ուսուցիչ՝** Արմենուհի Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…….3

2. Գրականության ակնարկ…….6

3. Գործնական համատեքստ…….11

4. Հետազոտության ընթացք…….12

5. Եզրակացություն….....…….15

6. Գրականության ցանկ…….17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի,**
**թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և**
**ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»**
**Վ. Ա Սուխոմլինսկի**

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավական չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն:

Մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով.

- Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու
- Սովորողը պետք է մշտապես տեղյակ լինի՝ ինչ է իրենից ակնկալվում
- Սովորողը պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու և օգնելու է

- Ուսուցիչը պետք է կարողանա համադրել բազմազան մեթոդները նույնքան բազմազան արդյունքների հետ:

Այսպիսով, ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը: Ուսուցչի մեթոդական ձեռնահասությունը /կոմպետենցիա/ ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովող կարևոր ուղիներից մեկն է:

Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը [5, 823]:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի

նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

Ելնելով իմ առջև դրված խնդիրներից՝ որոշեցի կատարել հետազոտություն և պարզել՝ ինչպես կարող է հարցադրման մեթոդով ձևավորել մտածելու կարողություն աշակերտների մոտ:

**Հետազոտության օբյեկտ** – II դասարան

II դասարանի ուսուցման գործընթաց:

**Հետազոտության նպատակ** – Ձևավորել մոտիվացիա և նպաստել ուսումնական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

**Հետազոտության խնդիրներ** – Ուսումնասիրել հարցադրումների մեթոդի արդյունավետությունը, հիմնավորել մեթոդի արդյունավետությունը ուսուցման գործընթացի ձևավորման գործում:

Հետազոտությունն անցկացրել եմ երկրորդ դասարանում , որտեղ սովորում են 22 աշակերտ:

Հետազոտությունն անցկացնելու համար կիրառել եմ <<Հարցադրումների մեթոդը>> և որպես գործիք՝ 6 W- երի ռազմավարությունը:

Ուսումնասիրել եմ գիտամանկավարժական գրականություն և հետազոտվող թեմային վերաբերող կատարված հետազոտական աշխատանքները և կատարել եմ վերլուծություն:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրակրթական դպրոցի և ուսուցչի առջև այսօր բազմաթիվ խնդիրներ են դրված: Անհրաժեշտ է փնտրել և գտնել ուղիներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ դարձնելուն:

Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ռազմավարություն, որոնք կմոտիվացնեն աշակերտին, ուսուցանվող նյութը կդարձնեն հետաքրքիր, հասկանալի և մտապահվող:

Ես ենթադրում եմ , որ այդպիսի ռազմավարությունից մեկը հարցերի միջոցով ուսումնական գործընթացի կազմակերպումն է:

Հետազոտության այս հատվածում փորձ կարվի գիտամանկավարժական գրականություն ուսումնասիրել, որոնք վերաբերվում են հարցադրումների մեթոդին :

Ուսումնասիրել եմ, Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր», Գլուխ 14, «Հարցադրումների մեթոդի առավելությունները» հետազոտական աշխատանքները, «Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» Ղուկասյան Ասյայի հոդվածը, «Հարցադրման մեթոդ», հեղինակ՝ Բաբերցյան Լարիսա հոդվածը:

ՈՒսումնասիրված աշխատանքներից առանձնացրել եմ մտքեր և հատվածներ, որոնք ինձ կօգնեին իմ հետազոտական աշխատանքը ճիշտ և նպատակային դարձնել: Երբ հարցադրումները կիրառում ենք որպես դասավանդման մեթոդ, ի հայտ է գալիս մեկ էական առավելություն: Աշակերտները պետք է իմանան, որ ուսումնառության մեջ հաջողություն են գրանցում: Ոչինչ այնքան չի մոտիվացնում, որքան աշակերտի բավարարվածության զգացումը, երբ նա հարցին ճիշտ է պատասխանում և անմիջապես արժանանում ուսուցչի ջերմ գովասանքին:

Հետևաբար, ներկայացնում ենք հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

• Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը

• Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա

• ստեղծում է փոխանցելի գիտելիք

• տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ

• դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին

• աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է

• աշակերտներին թույլ է տալիս գործնականում *կիրառել* ուսուցչի հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը

• վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)

• անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը

• կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար

• թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը

• խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

Թերություններն այն են, որ հարցադրումների մոտեցումը.

• Կարող է ժամանակատար լինել

• դժվարեցնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը

• հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար: /5, Ջ. Փ.Գ. 14/

Ըստ Ֆ. Գրոյսերի (1964)՝ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող, «փաստային» և «մտածել ստիպող» հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի:

Երեխաների մասնակցությունը և ակտիվ ներգրավումն ապահովելու, նրանց մտածողության խթանման և սովորելու հմտությունների զարգացման համար չափազանց կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերն ու հարցադրումները: Հարցերը կամ հարցադրումները երեխաների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են:

Հարցերը պետք է լինեն՝

— հստակ,
— նպատակաուղղված,
— հակիրճ,
— տեղին,
— երեխաների մակարդակին համապատասխան,
— տրամաբանական հաջորդականությամբ,
— մտածելու տեղիք տվող:/Ա. Ղ. ,165 /

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ.

1. բաց
2. փակ
3. հուշող
4. ենթատեքստով
5. հետադարձ
6. ուղղորդող/Բ. Լ, 2/

ՈՒսուցիչը պետք է՝

- Համոզվի, որ երեխաները հասկացել են հարցը:
- Հարցը ձևակերպի հակիրճ:
- Հարցը ձևակերպի հստակ:
- Կշռադատի հարցի բարդությունը և երեխաներից պատասխաններ ստանալու հնարավորությունը:
- Չպե՛տք է տա՛ անորոշ հարցեր:
- Չպե՛տք է ուղղորդի երեխաներին դեպի ուսուցչի նախընտրած պատասխանը:
- Չպե՛տք է պատասխանի հարցերին:/Բ. Լ., 4/

Հարցերը կամ հարցադրումները աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու համակարգելու , ստեղծագործական և քննադատական մտատածողությունը զարգացնելու կարևոր գործոն են։

Ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնելը, այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից։

Հարցերի և հարցադրումների վերջնական նպատակը աշակերտներից պատասխան և արձագանք ակնկալելն է և ուսուցանվող նյութի ընկալումն ապահովելն է։ Ուսուցման ընթացքում տարբեր տեսակի հարցերն ու հարցադրումները հիմնականում օգտագործվում են հետևյալ նպատակներին հասնելու համար.

- Վարժեցնող-մարզող հարցերը նպատակ ունեն ընդլայնելու նյութի ընկալման և ըմբռնման շրջանակները։
- Ստուգող հարցերը նպատակ ունեն վերահսկելու և գնահատելու նյութի ըմբռնման մակարդակը։

Գովեստը կամ խրախուսումը, որին արժանանում են հաջողության հասնելով, ուսումնառության գործընթացի շարժիչ ուժն է:

Հետևաբար՝

• Ուսուցիչները պետք է համոզվեն, որ սովորողները հստակ գիտեն՝ ինչ է իրենցից սպասվում և ինչպես անել դա: Նրանք գիտեն նաև, որ անհրաժեշտության դեպքում կարող են օգնություն ստանալ:

• Որոշ առաջադրանքներ պետք է լինեն պարզ, որոշ շտկումներից հետո արագ իրագործելի, որպեսզի բոլոր սովորողները կարողանան որոշակի հաջողության հասնել: Իսկ մյուս առաջադրանքները կարող են ավելի աշխատատար լինել:

• Ուսումնառության մեջ գրանցած հաջողություններն անպայման գովեստի խոսքերի կամ այլ հավանության պետք է արժանացնել՝ չանտեսելով անգամ ամենասովորական հաջողությունը, օրինակ՝ առաջադրանքը քիչ թե շատ հաջող կերպով ավարտելը:

Խրախուսումը չպետք է իրեն սպասել տա: Վերոնշյալ երեք կետերը հիմնաքարային են մոտիվացիայի համար: Դրանք իսկապես շատ լուրջ քննության են արժանի: Զգուշացե'ք բավարարվածության զգացումից առաջացած թակարդից:

Եթե առավելագույն հաջողության հասնելու հնարավորություն տալիս եք ձեր աշակերտների մեծամասնությանը. հաջողությունը պետք է սովորական լինի բոլոր սովորողների համար, հակառակ դեպքում ոմանք կկորցնեն սեփական ուժերի հանդեպ հավատը, որի շնորհիվ իրականանում է ուսումնառությունը: Սովորում և հաջողության են հասնում նրանք, ովքեր հավատում են իրենց ուժերին: /Ջ. Փ.,Գ.5, 8/

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Վերջին տարիներին տարրական դասարանների ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել և որոնել ուսուցման իդիալական տարբերակ: Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում:

Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեություն, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները: Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպումը:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել հարցադրման մեթոդի միջոցով աշակերտների մոտ ստեղծագործականության ձևավորման և զարգացման գործընթացը:

Համաձայն առաջադրված նպատակի և խնդիրների՝ կազմել էի ուսումնասիրության ռազմավարություն:

Տեսական վերլուծության վրա հիմնվելով՝ օգտագործել էի «Հարցադրումներ» մեթոդը որպես հետազոտության հիմնական գործիք:

Նպատակս է եղել հարց ու պատասխանի միջոցով ուսուցանվող նյութը դարձնել կայուն գիտելիք: Օգտագործել եմ <<6 W- երի>> ռազմավարություն:

Հարցադրումները կատարվել են կարճ՝ ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս հարցադրումներով:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հարցադրումների մեթոդի կարևորությունը սովորողների ստեղծագործականության ձևավորման և զարգացման գործընթացում պետք է լինի կայուն և ճիշտ։

Նպատակն էր ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունը, որը կիրառվում է սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողությունը զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար։

Իմ առջև դրեցի խնդիր ուսումնասիրվող թեմաները քննարկել 6W ռազմավարությամբ։

Հարցերն օգտագործել ենք տարբեր նպատակներով.

- Նոր տեղեկատվություն ստանալ
- Ունեցած տեղեկատվությունը պարզաբանել
- Խոսակցության թեման փոխել
- Ճիշտ պատասխանը հուշել
- Իրավիճակի մասին կարծիք կամ գնահատական արտահայտել
- Հարցերի իմաստային կամ զգացմունքային լիցքը փոխել։

Թեմայի ուսումնասիրությունից հետո սովորողները զույգերով երկխոսություն էին վարում , փորձելով պարզել , թե ինչ է տվել իրենց տվյալ թեմայի ուսումնասիրությունը։

Օրինակ՝ <<Ինչո՞ւ սովորեցիր այս թեման>>

<< Ի՞նչ տվեց այն քեզ>>

<< Որտ՞եղ, ե՞րբ, ինչպե՞ս կարող ես կիրառել ստացած գիտելիքները>>

Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տարածում է գտել այսպես կոչված <<Վեց W-երի>> ռազմավարությունը։

Այս ռազմավարությունն օգնում է <<իջեցնել օդում կախված ինֆորմացիան>> և այն կապել իրական կյանքին, դարձնել ավելի գործնական ։ Բացի այդ, հարցեր ձևակերպելու նպատակով, տարբեր կողմերից խնդրի դիտարկումը հնարավորություն է տալիս նաև երևան հանել թեմայի լավ չյուրացրած հարցերն ու գաղափարները։

Հնարն առավել խաղային դարձնելու համար օգտագործում էինք խորանարդ։

Խաղ- ուսուցման միջոցով երեխաները սկսում էին հետաքրքիր մտքեր բարձրաձայնել։

Աշակերտները ամբողջ դասի ընթացքում ակտիվ էին, մտածում էին հարցադրումներ և գիտակցում պատասխանը։ Կային երեխաներ, որ իրենց հարցադրումը նախօրոք ասում էին դասընկերոջը։ Նկատելով այդ ամենը չէի արգելում, քանի որ սովորելու, գիտելիքը յուրացնելու մի ձև էլ դա էր։

Հետազոտությունը ցույց տվեց, որ բոլոր աշակերտները մասնակցում էին դասին։

Այս ռազմավարությունը դարձավ դասապրոցեսի անբաժան մասը։

Այսպիսի աշխատանքը տարրական դպրոցում հաջողությամբ հաղթահարում է նման առաջադրանքները, օգնում ուսուցչին յուրաքանչյուր աշակերտի համար կառուցել անհատական կրթական հետագծեր։

Ո՞վ
Ինչո՞ւ
Որտե՞ղ


Ո՞վ
Ինչո՞ւ
Ե՞րբ
Որտե՞ղ
Ի՞նչ
Ինչպե՞ս

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Առարկան հարկ է շարունակել ուսումնասիրել մինչև այն կյուրացվի։**

**Յ. Ա. Կոմենսկի «Մեծ դիդակտիկա»։**

Դասավանդման մեթոդը պետք է հեշտացնի առարկայի յուրացումը և չառաջացնի ձանձրույթ առարկայի նկատմամբ։

Այսպիսով՝ ժամանակակից հասարակությանը անհրաժեշտ է անձ, որն ունակ է ինքնակատարելագործման, ինքնազարգացման։

Իմ կողմից կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների, հետազոտությունների արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացություններին.

- Յուրաքանչյուր մեթոդ ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին կարող են մոտիվացնել աշակերտին։
- Հարցադրումների մեթոդի ճիշտ կիրառման դեպքում կարող է աշակերտների մոտ ձևավորվել մոտիվացիա։

<<Վեց W- երի>> ռազմավարությունը մոտիվացնում էր աշակերտներին։ Հնարի նպատակն էր քննարկվող հարցի, երևույթի, թեմայի մասին հնարավորինս շատ ու բազմակողմանի հարցեր տալու ճանապարհով նպաստել դրա առավել արդյունավետ և խորությամբ յուրացմանը, որը ստացվեց, և արդյունքը գոհացնող էր։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հարցադրումների մեթոդը օգնում են ուսուցման կարևոր առաջադրանքներ կատարելիս: Նրանք երեխաների մոտ հոգեբանական պատրաստակամություն են ստեղծում բանավոր հաղորդակցության համար:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հարցադրումների մեթոդը կարող է օգտագործվել դպրոցի ուսումնական գործընթացում՝ ցանկացած ուսումնամեթոդական համալիրի հետ աշխատելիս:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է ուսուցման միջին փուլի համար հարցադրման մեթոդի մշակման մեջ:
Հետազոտության ստեղծագործական նշանակությունը կայանում է նրանում, որ օգտագործվում է կանոնավոր և համակարգված՝ հենվելով ծրագրային նյութի վրա և ակտիվ գործունեություն ծավալելու նպատակով:

Հետազոտության թեմայի շուրջ աշխատելու ընթացքում գրականությունն ուսումնասիրելիս հանգեցի այն եզրակացման , որ հարցադրումների մեթոդը կարող է հանդիսանալ հաղորդակցական կարողությունների զարգացման և ձևավորման նախադրյալ:
Եվ այսպես, այս տարվա իմ աշխատանքներում ամենաարդյունավետը, հետաքրքիրն ու հաջողվածը հարցադրումների մեթոդով դասերն էին, որոնց ընթացքում հնարավոր էր դառնում ապահովել նույնիսկ ամենապասիվ և սովորաբար քիչ հետաքրքրություն և մասնակցություն ցուցաբերող սովորողների ակտիվ ներգրավվածությունը ուսումնական պրոցեսին:

Ըստ որում, ինձ համար բացահայտեցի, որ հարցադրումների մեթոդի մանրակրկիտ մտածված լինելու , «6 W- երի» ռազմավարությունն իրականացնելու դեպքում ոչ միայն կարող ենք օգտագործել դասաժամերին, այլև դասամիջոցներին, էքսկուրսիաների ժամանակ, արձակուրդների ընթացքում:

Ամփոփելով նշեմ, որ այսքանով չեն սահմանափակվում մեր փորձարկած և փորձարկելիք դասերը, և որ սա միայն ավազի մի հատիկն է այն անսահման հնարավորությունների մեջ, որ տալիս է հարցադրումների մեթոդը:

**Ուսուցիչը պետք է դիմի ոչ այնքան աշակերտների հիշողությանը, որքան նրանց մտքին, որպեսզի հասնի ըմբռմանը, ոչ թե պարզապես անգիր անելուն:**

**Ֆեդոր Իվանովիչ Յանկովիչ դե Մարիևո**

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**1**.Ջեֆ Փեթթի «Դասավանդումն այսօր» , Գլուխ 14, Հարցադրումների մեթոդի առավելությունները» հետազոտական աշխատանք

**3**.«Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» Ղուկասյան Ասյա, հոդված

**4**.https://lib.armedu.am/Հարցադրման մեթոդ , Բաբերցյան Լարիսա